Կարգապահական գործ թիվ ԿԳ-14119

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի պարիլի 15-ի թիվ 88-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/63-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԺԱՆՆԱ ՕՀԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լուսինե Սահակյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Երվանդ Վարոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ժաննա Օհանյանին (արտոնագիր թիվ 623) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

02.10.2014թ. և 09.10.2014թ. ՀՀ Փաստաբանների պալատում ստացվել է Ռազմիկ Դավթյանի և Ջուլետա Դավթյանի դիմումը փաստաբան Ժաննա Օհանյանին պատասխանատվության ենթարկելու մասին:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

23.10.2014թ. ՀՀ Փաստաբանների պալատի նախագահի թիվ 345-Ա/ԿԳ-14119 որոշմամբ փաստաբան Ժաննա Օհանյանի (արտոնագիր թիվ 623) նկատմամբ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2, 2.2.3, 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.1.10 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ (թիվ ԿԳ-14119):

3. **<u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>**

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողները 12.12.2014թ. ներկայացրել են գրավոր բացատրություն հետևյալ բովանդակությամբ.

«Ի լրումն ՀՀ Փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված 2.10.2014թ. դիմումի համաձայն հայտնում ենք հետևյալը. 12 տարի անց մենք մեր ընտանիքով 2009թ. հուլիսին 9-ին ՌԴ-ից վերադարձանք մեր հայրենիքը ապրելու, բայց դռաղտից եկանք

ընկանք դժողք: Մենք չէինք պատկերացնում թե ինչպիսի օրենքներ են գործում այս երկրում, եկել էինք ամեն ինչից անտեղյակ կարգ ու կանոնից զուրկ մի երկիր, որ տիրում է անարդարությունը:

Մենք երբ մտանք մեր բնակարանը հարևանները մեզ ասեցին դուք գիտեիք որ ձեր բնակարանը 12 տարի շարունակ Գևորգը վարձով է տվել մի քանի ընտանիքների և անբարոյականների, տեսնելով ամբողջությամբ բնակարանի վիճակը թալանված, գույքը կոտրված, ննյասենյակի դռան փականը կոտրված թալանված սենյակը դառցրել էին աղբանոց, մենք այդ սենյակում էինք տեղափոխեր մեր անձնական իրերը ոսկեղենը և գույքը: Մենք պահանջում էինք հեռախոսով որ գա և պատասխան տա, թե ինչու է այս վիճակին հասցրել մեր բնակարանը, նա խուսափում էր մեզ հետ հանդիպելու և բացատրություն տալու:

2009թ. օգոստոսին բողոքարկեցինք գլխավոր դատախազություն:

Մաշտոցի շրջանի հետաքննչական բաժնի կողմից կատարվեց քննություն և մեզ հայտնեցին, քանի որ Գևորգ Բարսեղյանը ՊՆ-ի հատուկ քննչական բաժնում է աշխատում որպես ավագ քննիչ և կազմած նյութերը հանձնեցին զինվորական հատուկ քննչական բաժին, որ իրենց ուզածով քննություն կատարվի, որ քրեական գործը դարձնեն քաղաքացիական: Եվ այսպես ՊՆ-ի հատուկ քննչական ծառայության քննիչ Հ.Շահնազարյանի որոշման համաձայն ներկայացրեցինք Մալաթյա-Սեբաստյա դատարան:

Մեր գործով 2010թ. –ին դիմեցինք փաստաբան Ժաննա Օհանյանին: Ծանոթանալով փաստաթղթերի հետ մեզ հայտնեց որ նախկին ձեր փաստաբանը Սեդա Ծառուկյանը սխալ գործողություն է արել, որ բողոքարկել է քրեականով: Նա մեզ հայտնեց, որ այս գործը քաղաքացիական է և մեր միջև կնքեցինք պայմանագիր և նա մեզանից պահանջեց 50000 ՀՀ դրամ գումար գործ թիվ ԵՄԴ/0115/02/11 հայցապահանջով վարձակալական անհիմն հարստացման գումար 3.600.000 դրամ և վնասի հատուցման 1.754.000 դրամ, հեռախոսային հետևանքով գոյացած 295.000 դրամ:

Փաստաբան Ժաննա Օհանյանի կողմից կատարված դատական վարույթի ժամանակ մեզ ասում էր, որ շատ ապացույցներ ունեք մենք կհաղթենք նա համոզված ասում էր, որ դատավոր Ա.Մկրտչյանի կողմից մեր հայցապահանջը կբավարարվի և դուք կստանաք ձեր վնասի գումարը, նա համոզված խոսք էր տալիս մի անհանգստացեք ամեն ինչ լավ կլինի:

2011թ. հոկտեմբերի նիստից հետո նա պահանջեց 2000 ԱՄՆ դոլլար և ասաց, որ մինչև նոյեմբերի 20 վերջին նիստն է լինելու ամեն ինչ լավ է լինելու միայն թե գումարը շուտ բերեք և նոյեմբերի 7-ին մենք իրեն տվեցինք 1400 ԱՄՆ դոլլար գումար այդ ժամանակ պայմանագիր չկնքեցինք մի քանի ամիս անցնելուց հետո նոր կնքվեց պայմանագիր: Նիստերի ժամանակ դատավոր Ա.Մկրտչյանը հայտնում էր, ձեր փաստաբանին ասեք թող պատրաստված գա, մենք հայտնում էինք, նա լռում էր: Մենք իրենից պահանջում էինք, որ ճիշտ գործողություն չես կատարում անտարբեր ես գործի նկատմամբ ինչու չենք ներկայացնում փորձագետի կողմից կազմած ակտ, ջրի, հոսանքի, գազի 12 տարվա տվյալները: Նա մեզ պատասխանում էր պետք չէ ձեր գործը չէ, մի խառնվեք ինքս գիտեմ ինչ եմ անում: Նա շատ անգամ նիստերից բացակայում էր, ասելով գնացեք և նիստը հետաձգեք, չէ որ ես էլ մարդ եմ անձնական գործեր ունեմ: 2012թ.-ի դատաքննության ժամանակ պատասխանող Գևորգ Բարսեղյանը Ժաննա Օհանյանին առաջարկեց, մեր ներկայությամբ, արի մեզ մոտ ՊՆ քննաչական բաժին, քրեական գործ կտանք կաշխատես, ինչ ես քաղաքացիական գործով զբաղվում և այդպես էլ եղավ նա ստացավ առաջարկած գործը և ինձ մոտ պարծենալով, որ քրեականով ավելի շատ գումար է ստացել, քան մեզանից:

02.07.2012թ.-ի դատարանի անբավարար վճռից հետո Ժաննա Օհանյանի հետ միասին պարտված դուս եկանք նիստերի դահլիճից: Նա անմիջապես զանգեց, ինչ-որ

մեկին Գայանեին ասելով, որ խայտառակ վիճակում է հայտնվել, չէ որ դու ասում էիր վճիռը մեր օգտին է լինելու: Մենք պահանջում էինք թե ինչն է պատճառը ինչու պարտվեցինք: Նա ասում էր մենք կբողոքարկենք դեռ շատ պահանջներ ունենք ներկայացնելու: Դիմեցինք վերաքննիչ և վճռաբեկ դատարաններին սակայն ապարդյուն:

Ժ.Օհանյանն ասում էր մի գնացեք վերաքննիչի նիստերին իմաս չունի միևնույն է նույն որոշումն է լինելու և նա չէր պայքարում ապացույցներ չէր ներկայացնում մենք պահանջում էինք, նա մեզ անպատիվ խոսքեր էր ասում հետո ասում էր որ մեզ հետ միասին ենք պայքարելու պահանջում էինք եթե ուժ չունես գործից հրաժարվի, նա ասում էր ձեր գործը չէ միևնույնն է ես հաղթելու եմ: Եվ ձեր վնասի գումարը դուք ստանալու էք: Նոր երևան եկած հանգամանքով դիմեցինք Մալաթյա-Սեբաստյա վարչական դատարան գործ թիվ ԵՄԴ0114/02/13: Ժաննա Օհանյանից պահանջում էինք, որ 2-րդ անգամ ենք դիմում դատարանին, որ սխալ հայցապահանջ է ներկայացվել:

Մեր կողմից դատարանին ներկայացնում էինք ապացույցներ, սակայն հաշվի չէին առնու,մ, միայն ընդունում էին պատասխանողի պահանջները սուտ գրագրությունները հիմնավորելով դատարանի կողմից և բարձր գնահատելով իր անձը չէ որ նա աշխատում է ՊՆ հատուկ քննչական բաժնում որպես ավագ քննիչ:

Դատարանը պատճառաբանելով, որ մեր կողմից վարձակալների հետ կնքված պայմանագիր չունենք, չէ որ մենք անտեղյակ էինք, որ մեր բնակարանում մարդիկ են բնակվել այն էլ անբարոյականներ: Եվ դատարանի կողմից որպես 3-րդ անձ վարձակալ Մանուշ Ադամյանից ոչ մի անգամ հարցաքննություն չկատարվեց, իսկ Ժ. Օհանյանը ամեն ինչ գիտեր և պահանջ չներկայացրեց հարցաքննության: Ստանալով նամակներ տարբեր տեղերից և պատասխանողից, որ պատասխանողը անվայել և անպատկառ խոսքեր էր գրում մեզ: Մենք նամակները հանձնում էինք Ժ. Օհանյանին, ասում էր սա հեչ, միևնունն է ես կհաղթեմ և ձեր պահանջած գումարը դուք կստանաք: 2013թ.-ի նոյեմբերին մենք հանդիպեցինք Ժ Օհանյանին մեզ ասաց, ինչ-որ մարդկանց է դիմել հանձնելով իրենց մեր ձայնասկավառակը, որ մենք կստանանք մեր պահանջված 6.000.000 դրամ գումարը և հարց էինք տալիս, որ իրոք կստանանք այդ գումարը նա պատասխանում էր այո:

2014թ.-ի փետրվարի 10-ին հանդիպեցինք և մեզ գրավոր վերադարձրեց 1.000.000 դրամ գումար:

Եվ հանձնեց պայմանագրի 1000 ԱՄՆ դոլլար գումարը:

Ժ. Օհանյանը մեզ թողնելով անելանելի շատ վատ դրության մեջ մեզ ասում էր որ պատասխանող Գևորգ Բարսեղյանը պահանջ է ներկայացնելու առժանապատվության և վնասի հատուցման գումար, որի պատճառով էլ նա հայցապահանջ է ներկայացրել դատարան:

Ժ.Օհանյանի նման խաբեփահ փաստաբաններն իրավունք չունեն մարդկանց ճակատագրով զբաղվել:

Մենք պահանջում ենք խորհուրդից, որ խստին որոշում կայացնել և պատժել»:

25.12.2014թ. վարույթը նախապատրաստողի նախաձեռնությամբ Պալատում տեղի ունեցած համատեղ հանդիպման ժամանակ դիմողները հստակեցրել են իրենց պահանջը և հայտնել, որ Պալատից պահանջում են պարտավորեցնել փաստաբան Ժաննա Օհանյանին իրենց վերադարձնել խոստացած 5.000.000 (հինգ միլիոն) դրամ գումարը և Գևորգ Բարսեղյանը դատարանից հետ վերցնի իր կողմից ներկայացրած հայցադիմումը:

Վարույթին կցված է հետևյալ բովանդակությամբ դիմում.

« Փաստաբանների պալատի նախագահ

պարոն Ա.Զոհրաբյանին

Թիվ 14-119 կարգապահական գործով դիմողներ

Ռազմիկ Դավթյանից

Ջուլետա Դավթյանից

Դիմում

Ի լրումն Ձեզ հասցեագրված մեր 2.10.2014թ. դիմումի պահանջում ենք փաստաբան Ժաննա Օհանյանին պարտավորեցնել մեզ վերադարձնել իր խոստացած 5 (հինգ) միլյոն դրամ գումար և դատարանից ետ վերցնի հայցապահանջը Գևորգ Բարսեղյանը: Պահանջում ենք արդար դրական լուծում:

Դիմողներ Ռ.Դավթյան

Ջ.Դավթյան 25.12.2014թ. »:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Փաստաբան Ժաննա Օհանյանը 24.12.2014թ. ներկայացրել է գրավոր բացատրություն հետևյալ բովանդակությամբ.

«Ռազմիկ և Ջուլիետա Դավթյանների հետ կնքել եմ թվով երկու փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրեր, որոնցով առաջին պայմանագրով ծառայության մատուցման գին է սահմանվել 50,000/հիսուն հազար ՀՀ դրամ/ , իսկ երկրոդ պայմանագրով 1400/ հազար չորս հարյուր / ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Փաստաբանական էթիկայի համաձայն խոստումներ չեմ տվել և ըստ պայմանագրի չեմ երաշխավորել գործի հարյուր տոկոսանոց լուծում, անգամ նշվել է, որ պատասխանատվություն չեմ կրում կայացված դատական ակտի համար, ***միայն հայտնել եմ, որ լավ է լինելու, հիմք ընդունելով բազմակի հաղիպումները և գործում առկա ապացույցները****:*

Առաջին իսկ օրվանից Ռազմիկ և Ջուլիետա Դավթյանները Գ. Բարսեղյանի հասցեին արտահայտվել են միայն բիջ, վերցնովի թուրքի լամուկ և այլ արտահայտություններով:

14-02-2011թ-ին հայցադիմում /դիմում/ է ներկայացվել վնասի հատուցման պահանջի մասին, որը ստորագրվել է հայցվորների կողմից, և հայցադիմումում նշված փաստերը գրագրված են եղել հայցվորների կողմից ներկայացված ապացույցներից:

Հայցադիմումը վերադարձվել է 15-02-2011, որոշման հիմքը ՀՀ քաղ. դատ. Օր.-ի 92-րդ և 144-րդ հոդվածները: Երեք անգամ սկսած Դատարանի 15.02.2011 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ գործը տվյալ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով: 09-03-2011 թ-ին որոշումը բողոքարկվել է վերաքննիչ քաղաքացիական դատարան և 14-04-2011 թ-ին գործը վերադարձվել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, գործն ըստ էության չլուծող դատական ակտը վերացվելուց հետո:

12-05-2011 թ-ին, 17-06-2011 թ-ին, 08-07-2011թ-ին, 05-08-2011 թ-ին, 26-08-2011 թ-ին, 23-09-2011թ-ին, 14-10-2011 թ-ին, 11-11-2011 թ-ին, 07-12-2011 թ-ին, 16-01-2012 թ-ին , 16-02-2012 թ-ին, 15-03-2012 թ-ին, 02-04-2012 թ-ին, 03-05-2012 թ-ին, 16-05-2012 թ-ին, 06-06-2012 թ-ին, 18-06-2012 թ-ին, 02-07-2012 թ- ականներին մասնակցել եմ դատական նիստերի: Հայցի լուծման ամսաթիվ է նշանակվել՝ 02-07-2012 թ-ը, կայացվել է դատական ակտը՝ վճիռ:

Որպես հայցվորների ներկայացուցիչ, 09-08-2012 թ-ին դատական ակտը՝ վճիռը, բողոքարկել եմ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, որը մերժվել է:

15-11-2012 թ-ին ՀՀ Վճռաբեկ դատարանին եմ ներկայացրել վճռաբեկ բողոք:

12.12.2012թ-ին, կայացվել է որոշում Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին:

Դեռևս 2012 թ-ին միջնորդել եմ դիմելու ՀՀ Նախագահ պարոն Ս. Սարգսյանին, ՀՀ Գլխավոր դատախազ պարոն Ա. Հովսեփյանին, Հ Հ Ոստիկանապետ պարոն Վ. Գասպարյանին Գ. Բարսեղյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու համար և կամ համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:

Նույն թվականին , քանի որ Գ. Բարսեղյանն ՊՆ աշխատակից է ուղղորդել և օգնել եմ դիմելու ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ՝ ՀՀ Զինվորական գլխավոր դատախազ պարոն Գ.Կոստանյանին:

Առանձնակի համդիպումներ եմ ունեցել զինվորական դատախազներ Համբարձումյանի և Հարությունյանի հետ Դավթյանների մասնակցությամբ, երբ նրանց ոչ ոք չէր լսում, ինձ հետ հանդիպումից հետո մի փոքր հետաքրքրություն առաջացավ որպեսզի օգնեն: Ինչպես ես, այնպես էլ Դավթյանները, բավականին մեծ թվով վիրավորանքներ ենք ստացել Գ. Բարսեղյանից: Դավթյանների մոտ կասկած է առաջացել որ ես համագործակցում եմ Բարսեղյանի հետ, որը ինքնին ծիծաղելի է:

Դիմել եմ նաև բավականին մեծ թվով կոլեգաների, խնդրել եմ, օգնություն նրանց օգնելու համար, սակայն ապարդյուն:

Անգամ ՀՀ Փաստաբանների պալատ մամլո ասուլիս եմ հրավիրել, բարձրաձայնել եմ մեր խնդիրը, սակայն ապարդյուն, քանզի ՊՆ քննիչը կրկին անգամ անցավ հակահարձակման: Դավթյանները նաև դիմել են մամուլին, բավականին մեծ թվով տպագրություն է առկա: Այնուամենայնիվ, կրկին անգամ դիմել ենք դատարան 04-02-2013 թ-ին բնակարանի վարձակալությունից գոյացած գումարների բռնագանձման պահանջի մասին հայցով: Հիշյալ հայցվով դիմեցինք դատարան, քանզի առակ էր ապացույց, որ վարձակալությամբ բնակվողը որոշակի գումար էր պարտք մնացել, ինչպես նաև նախկին դատական ակտով հաստատվել էր, որ բնակարանում այլ անձինք են բնակվել: Այն անձը, ով հանդիսանում էր վարձակալը /Մանուշ Ադամյանը/ հիշյալ գործով ներգրավեցինք որպես պատասխանող, որպեսզի հնարավորություն ունենայինք դիմելու հայցի ապահովում կիրառելու համար, քանզի նա ընդհանրապես կապ չէր հաստատում: Համոզվեցինք, որ այդ խայծը գործեց: Կողմը եկավ, պայմանավորվեցինք, որ նա կհայտարարի, որ իրոք բնակվել է վարձակալությամբ, հայտարարեց, սակայն հաջորդ նիստերին չներկայացավ , քանզի Բասեղյանը կրկին ահաբեկել էր: Բարսեղյանը ահաբեկել է նաև Դավթյանների բոլոր հարևաններին: Դավթյանների ներկայությամբ զանգահարեցի Մանուշ Ադամյանին և խնդրեցի, որ պարզաբանի ինչու նա նիստերին չի գալիս, առաջարկել եմ անգամ հոգալու ճանապարհային ծախսերը, նա էլ թե դրանք շառ են, մի օր պտտվելու են ու քեզ վրա գրեն, այդքան մի չարչարվի>> :

04-02-2013 թ-ին բնակարանի վարձակալությունից գոյացած գումարների բռնագանձման պահանջի մասին հայցադիմումով դիմել ենք դատարան: Հայցադիմումները ստորագրվել են հայցվորների կողմից / թիվ ԵՄԴ/0114/02/13 քաղ գործ/: 14-03-2013 թ-ին, 29-03-2013 թ-ին, 12-04-2013 թ-ին, 12.2013 թ-ին, 26-04-2013 թ-ին, 16-05-2013 թ-ին, 31-05-2013 թ-ին, 14-06-2013 թ-ին, 27-06-2013 թ-ին, 18-07-2013 թ-ին, 26-08-2013 թ-ին, 06-09-2013 թ-ին, 24-09-2013 թ-ին, 14-10-2013 թ-ին, 29-10-2013 թ-ին, 19-11-2013 թ-ականներին մասնակցել եմ դատական նիստերի: Անգամ, գրավոր հրաժարվել եմ ներկայացված հայցապահանջից, որպեսզի պետական տուրքի հարց չառաջանա, քանզի Դավթյանները այդ ճանապարհով անցել էին, և ինձանից էին պահանջում պետական տուրքի գումարները, մոռանալով, որ իրենք են պահանջել գումարները:

03-12-2013 թ-ին կայացվել է դատական ակտը՝ վճիռ, որով պետական տուրքի հարցը լուծված էր, սակայն 28-12-2013 թ-ին, դատական ակտը՝ վճիռը բողոքարկվել է վերաքննիչ դատարան: 10-04-2014 թ-ին, Վերաքննիչ բողոքը մերժվել է ամբողջությամբ՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:Այս անգամ վերաքննիչ դատարանը հաշվի չառնելով և չուսումնասիրելով գործում առակա ապացույցները պետական տուրքի գումար է հաշվարկել: Այդ հիմքով 13-05-2014 թ-ին, դատական ակտը բողոքարկել եմ Վճռաբեկ դատարան: 04-06-2014 թ-ին կայացվել է որոշում բողոքը ետ վերադարձնելու մասին:

Անձամբ դիմել եմ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, սերտ համագործակցել եմ վերջիններիս հետ, գործի արդարացի և ճիշտ լուծման համար տվել եմ բոլոր իմֆորմացիան ինչին տիրապետել եմ, անգամ նախկինում քննված նյութերի պատճեններն եմ տրամադրել :

Ի վերջո շուրջ 3 տարի օրենքի շրջանակներում կատարել եմ տարբեր գործողություններ ուղղված Ռ. և Ջ. Դավթյանների օգտին քաղ. գործը լուծելու համար, չնայած որ Ռազմիկ Դավթյանը շատ էր ցանկանում որ ես Բարսեղյանին պատժեմ:

Դավթյանների հետ կնքել եմ թվով երկու պայմանագրեր, վերադարձրել եմ պայմանագրերի գումարներից էլ ավելին,/տես ապացույցները/

Դավթյանները պատճառաբանում են թե որտեղից է գոյացել գումարները, ապա մոռանում են, որ բազմիցս իրենք են ասել, որ Բարսեղյանը գումար չի տա, անգամ նա է դիմել դատարան վնասի հատուցման հայցով:

Մենք գալով փոխհամաձայնության, պարտավորվել էի ետ վերադարձնել պայմանագրով նախատեսված գումարները, ինչպես նաև քաղաքացիական գործերից առաջացած պետական տուրքի գումարները:

10.02.2014թ-ին գրված ստացականով վերադարձրել եմ 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ, իսկ 18.09,2014թ-ին վերադարձրել եմ 1000 ԱՄՆ դոլար, որը համարժեք էր 400.000 / չորս հարյուր հազար /ՀՀ դրամի:Ընդհանուր առմամբ վերադարձրել եմ եմ 1.400.000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ, որն իր մեծ ներառում էր Դավթյանների կողմից պայմանգրերի համաձայն ինձ վճարված ամբողջ գումարները, դատական ակտերի հիման վրա Դավթյանների կողմից վճարվելիք պետական տուրքի գումարները, ինչպես նաև հնարավոր վնասները, որոնք ներկայացվում էին Դավթյանների կողմից / Դավթյանները միշտ ներկայացնում էին , որ 1400 ԱՄՆ դոլարը իրենք վերցրել էին տոկոսով, չնայած այդ մասին որևէ պաացույց չկա/:

18.09.2014 թ-ին վերջին գումարը ստանալիս Դավթյանները տվել են ստացական մեջբերում եմ բառացի....<< Ես Ջուլետա Դավթյանս, հայտնում եմ, որ եղբորս Ռազմիկ Դավթյանի հետ միասին փաստաբան Ժաննա Օհանյանից ստացանք 1000/մեկ հազար/ ԱՄՆ դոլար, այլևս պարտք ու պահանջ չունենք>>: Ստացականը ստորագրված է Դավթյանների կողմից :

Ի հավելումն այն մեկ միլիոն դրամի և այստեղից էլ պարզ մաթեմատիկական հաշվարկներով երևում է, որ գումարային ոչ մի պարտավորություններ չունեմ: Այս ամենից կարելի է ենթադրել հետևյալը, որ Ռազմիկ և Ջուլիետա Դավթյանները ցանկանում են այն բոլոր պատճառված վնասները, որոնք չեն կարողանում ստանալ Գևորգ Բարսեղյանից, ենթագիտակցաբար բարդում են ինձ վրա և պահանջում են ինձանից:

Ձեր ուշադրությանն եմ հրավիրում նաև այն հանգամանքին, որ Դավթյանները գրելով, որ պարտք ու պահանջ չունեն, սակայն դիմում են Ձեզ:

Ինչ վերաբերվում է իմ կողմից թույլ տրված արտահայտությանը, ապա այն տեղի է ունեցել Դավթյանների դրդմամբ ու անհարգի գործողությունների արդյունքում, քանզի իրենք բազմիցս ինձանից պահանջում էին գումարներ, ինչպես նաև որպեսզի ես անձամբ պատժեմ Գևորգ Բարսեղյանին բոլոր հնարավոր ձևերով: Ամեն դեպքում գտնում եմ, որ այդ արտահայտությունը կիրառելի և տարածված արտահայտություն է, անգամ դասական հայ գրականության մեջ է բազմիցս արտացոլվել:

Միաժամանակ ցանկանում եմ հիշատակել, որ ես երբևէ իմ վստահորդների նկատմամբ որևէ վիրավորական արտահայտություն թույլ չեմ տվել, չնայած նրանց վերաբերմունքին:

Ես իմ նախկին վստահորդների՝ Դավթյանների, նկատմամբ իմ պարտականությունները կատարել եմ պատշաճ՝ առաջնորդվելով Փաստաբանության մասին ՀՀ օրենքի համաձայն:

Կից ներկայացնում եմ Դավթյանների գործով իմ կողմից կատարված գրագրության փաստաթղթերի պատճենները»:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում, նախապատրաստող Ա.Սիմոնյանը 29.12.2014թ. ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի. *<<Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի, Փաստաբանի վարքագծի Կանոնագրքի, և փաստաբանների պալատի Կանոնադրության պահանջները խախտելու, իր մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:*

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5-րդ հոդվածի համաձայն իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պարտավոր է հետևել ՀՀ գործող օրենսդրությանը, Պալատի Կանոնադրությամբ և Կանոնակարգով սահմանված նորմերի պահանջներին, լինել սկզբունքային և օրինապահ, հարգել իրեն դիմած վստահորդի իրավունքները, օրինական շահերը:

Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն փաստաբանը պարտավոր է ազնիվ և բարեխիղճ պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով, պահպանել սույն օրենքի, Փաստաբանի վարքագծի Կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք), և փաստաբանների պալատի Կանոնադրության պահանջները:

Համաձայն Կանոնագրքի 2.2.2 կետի՝ փաստաբանը չպետք՝ կատարի այնպիսի գործողություններ որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):

Համաձայն Կանոնագրքի 2.2.3 կետի՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներումիր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Համաձայն Կանոնագրքի 2.7.2 կետի՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Համաձայն Կանոնագրքի 3.1.8 կետի՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Համաձայն Կանոնագրքի 3.5.5 կետի՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Համաձայն Կանոնագրքի 3.1.10 կետի՝ փաստաբանն իր մասնագիտական պարտականությունների բարեխիղճ և որոկյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից:

Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, նկատի ունենալով, áñ

դիմողները շուրջ չորս տարի պայմանագրային հիմունքներով համաձայնեցված աշխատել են իրար հետ,

պատասխանողը գործել է և նրա գործողությունները բխել են ի շահ դիմողների և վստահորդների,

դիմողների և վստահորդների բոլոր հանձնարարությունները կատարվել են պատասխանողի կողմից բարեխղճորեն, ջանասիրաբար,

պատասխանողը չի վիրավորել և որևէ վիրավորական արտահայտություն թույլ չի տվել դիմողների՝ իր վստահորդների հասցեին,

դիմողները որևէ կասկած չունեն պատասխանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների վերաբերյալ,

հակառակորդ կողմի հետ կապերը (նրա հետ համագործակցելը, նրանից գումար ստանալը) որևէ փաստով չհաստատված և միայն դիմողների կասկածի արդյունք է,

Գտնում եմ,

որ չի հաստատվել ՀՀ Պալատի նախագահի 23.10.2014թ. թիվ 345-Ա/ԿԳ-14119 որոշման հիման վրա փաստաբան Ժաննա Օհանյանի նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2, 2.2.3, 2.7.2 , 3.1.8, 3.5.5 և 3.1.10 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով նշված ենթակետերի խախտման փաստը>>:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 13.01.2015թ.:

Սույն կարգապահական գործով Պալատի խորհուրդը գումարել է երկու նիստ՝ 11.03.2015թ. և 15.04.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Դիմողները և պատասխանողը շուրջ չորս տարի պայմանագրային հիմունքներով համաձայնեցված աշխատել են իրար հետ,

2. Պատասխանողի կողմից իր վստահորդներին հասցեագրված կարճ հաղորդագրությունները պարունակում են այնպիսի արտահայտություններ, որոնց օգտագործումը կասկածի տակ է դնում փաստաբանի հեղինակությունը, չեն նպաստում փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը,
3. Պատասխանողի կողմից երաշխավորություն է տրվել գործի արդյունքի վերաբերյալ, այն դեպքում, երբ այդ արդյունքը կախված է եղել դատավորի որոշումից,

Շարադրված փաստերը հիմնավորվել են հետևյալ ապացույցներով.

1. *Դիմողների 12.12.2014թ. ներկայացրած գրավոր բացատրությունը /6 էջ/.*
2. *Դիմողների կողմից բացատրությանը կից ներկայացված 10.02.2014թ. ստացականի պատճենը /1 էջ/.*
3. *ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված դիմողների 25.12.2014թ. դիմումը /1 էջ/.*
4. *Փաստաբան Ժաննա Օհանյանի 24.12.2014թ. ներկայացրած գրավոր բացատրությունը /4 էջ/.*
5. *Բացատրությանը կից պատասխանողի ներկայացրած 18.09.2014թ. ստացականի և իր կողմից պատրաստված մի շարք փաստաթղթերի՝ հայցադիմումի, առարկությունների, միջնորդությունների, ՀՀ վճռաբեկ դատարանին, դատախազությանը, ՀՀ ՊՆ քննչական ծառայությանը, ՀՀ նախագահին, Գլխավոր դատախազին, Ոստիկանապետին, ՄԻ պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների և մամուլի հրապարակումների պատճենները /33 էջ/.*
6. *Դիմողների կողմից 02.10.2014թ. դիմումին կից ներկայացված փաստաթղթերը /համաձայն կարգապահական գործի հանձնման մասին ստացականի 1-6 կետերի/*
7. *Դիմողների, ինչպես նաև պատասխանողի կողմից Պալատի խորհրդի նիստի ընթացքում տրված բանավոր բացատրությունները:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված 11.03.2015թ. թիվ ԸԴՂ/ԿԳ/16115 տեղեկանքի համաձայն փաստաբան Ժաննա Օհանյանի (արտոնագիր թիվ 623, ստացված 14.01.2002թ.) նկատմամբ 2006-2015թթ. ժամանակահատվածում երկու անգամ հարուցվել են կարագապահական վարույթներ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու փաստով, որոնք կարճվել են և մեկ անգամ փաստաբան Ժաննա Օհանյանը մեղավոր է ճանաչվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3, 5.1.1 և 5.1.2 ենթակետերի խախտման համար և ենթարկվել խիստ նկատողության, որպիսի տույժը մարված է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ժաննա Օհանյանը թույլ է տվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքիշ 2.2.2, 2.2.3 և 3.1.10 ենթակետերի պահանջների խախտում հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն Կանոնագրքի 2.2.2 կետի՝ փաստաբանը չպետք՝ կատարի այնպիսի գործողություններ որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):

Համաձայն Կանոնագրքի 2.2.3 կետի՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Համաձայն Կանոնագրքի 3.1.10 կետի՝ փաստաբանն իր մասնագիտական պարտականությունների բարեխիղճ և որոկյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից:

Այս պարագայում Պալատի խորհուրդը հիմնավորված է համարում, որ Պատասխանողի կողմից իր վստահորդներին հասցեագրված կարճ հաղորդագրությունները պարունակում են այնպիսի արտահայտություններ, որոնց օգտագործումը կասկածի տակ է դնում փաստաբանի հեղինակությունը, չեն նպաստում փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Բացի այդ վստահորդների հետ համաձայնություն ձեռք բերելիս պատասխանողի կողմից երաշխավորություն է տրվել գործի արդյունքի վերաբերյալ, այն դեպքում, երբ այդ արդյունքը կախված է եղել դատավորի որոշումից:

Պալատի խորհուրդը գտնում է նաև, որ փաստաբան Ժաննա Օհանյանի նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Պալատի խորհուրդը չի կարող հետևության հանգել պատասխանողի կողմից նման խախտումներ կատարելու վերաբերյալ:

Փաստաբան Ժաննա Օհանյանի նկատմամբ նշանակվելիք կարգապահական տույժի տեսակն ընտրելիս Պալատի խորհուրդը հաշվի է առնում թույլ տրված խախտման բնույթը, ինչպես նաև փաստաբանների անձը բնութագրող հանգամանքները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 23.10.2014 թվականի 345-Ա/ԿԳ-14119 որոշմամբ փաստաբան Ժաննա Օհանյանի (արտոնագիր թիվ 623) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանի կողմից նման խախտումներ կատարելու հանգամանքը ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:***

2. ***Փաստաբան Ժաննա Օհանյանին (արտոնագիր թիվ 623) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.2.2, 2.2.3 և 3.1.10 ենթակետի պահանջների խախտման համար:***
3. ***Փաստաբան Ժաննա Օհանյանի (արտոնագիր թիվ 623) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դենթոլոգիա» թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով:***
4. **Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Ժաննա Օհանյանին և դիմողներին:**

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ Լուսինե Սահակյան